**Հավելված 5**

**«ԷԱՃԱՊՁԲ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/43 »* ծածկագրով**

**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/43-2**

ք. Երևան 09/ 04 /2026թ.

« ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ »-ը ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյան ի, որը գործում է « ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « ՍԵԳ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Վանիկ Սեփոյան ի, որը գործում է « ՍԵԳ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**